ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## „ՄՇԱԿ"

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

## 1878 Թւից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից:

Լրագրի ձեւը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվեն 5 կոպէկով հատը:

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ կը դառնայ Մասնաժողովը:—Ներքին տեսութիւն: Նամակ Խարկովից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Իտալիա: Նամակ Թիւրքիայից:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Այնտեղ և Այստեղ:

## ԻՆՉ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

Այժմ երբ լուր է տարածվել թէ շատերը հայ գաղթականներից, որոնք քանի մի ամիս առաջ գեներալ Տէր-Ղուկասովի բանակի հետ եկած էին Կովկասեան սահմանների այս կողմը, սկսում են կրկին վերադառնալ իրանց հայրենիքը, Թիւրքաց Հայաստանը,—ինքն իրան առաջարկվում է հարց՝ ինչ պէտք է արած մնացած փողերի հետ, որոնք գտնվում են Թիֆլիսի մասնաժողովի ձեռքում:

Մասնաժողովի վերջին հաշւից երեւում է որ մասնաժողովի ձեռքում այս րոպէիս կայ մօտ 17,000 րուբլ դրամագլուխ: Հարցնում ենք՝ ինչ պէտք է արած այդ փողի հետ, եթէ գաղթականները որոնց համար և հաւաքվել է այդ գումարը, բոլորն էլ կրկին կը գաղթեն Թիւրքիա:

Պարզ է որ գաղթականների մեր երկրից իրանց հայրենիքը վերադառնալուց յետոյ, մեր մասնաժողովը, որ հիմնվել է միմիայն այն նպատակով որ օգնութիւն հասցնէ այդ թշուառ գաղթականներին, պէտք է լուծվի, որովհետև գաղթականների հեռանալով Թիֆլիսի մասնաժողովի պաշտօնը վերջանում է: Ռուսաց պետութեան սահմաններից դուրս այդ մասնաժողովը իրաւունք չունի գործելու, որովհետև նա հիմնվել է միայն այն նպատակով որ օգնութիւն հասցնէ մեր սահմանները անցած գաղթական քրիստոնեաներին, այդ մտքով էլ խնդիրք է տուել կառավարութեանը և այդպէս էլ հաստատվել է կառավարութենից:

Ուրեմն գաղթականների հեռանալուն պէս Թիֆլիսի մասնաժողովը դադարում է գոյութիւն ունենալուց:

Բայց ի՞նչ պէտք է անի նա այն փողերի հետ որոնք կան նրա կասսայում:

Երկու ելք կայ: Կամ մեր մասնաժողովը պէտք է իր գործունէութիւնը վերջացնելուն պէս և իր բոլոր առձեռն ունեցած փողերն էլ բաժանի մնացած գաղթականներին, որոնք ճանապարհ են ընկնում դէպի իրանց հայրենիքը,—կամ եթէ այդ չէ կամենում անել, պէտք է աշխատի իւրանից կազմակերպել մի նոր մշտական մասնաժողով, մի նոր մշտական բարեգործական ընկերութիւն, այդ բանի համար ի հարկէ կառավարութենից առանձին թոյլտուութիւն խնդրելով: Այն ժամանակ մնացած փողերը պէտք է գործ դրվեն որպէս հիմնական դրամագլուխ նոր ընկերութեան: Մեր կարծիքով այդ վերջին ելքը նախադասելի է առաջինից: Մեզանում յայտնի է թէ որքան դժուար է գումարներ հաւաքել, իսկ այդ մասնաժողովը ունի արդէն մի յայտնի գումար, որ և կարող է գործ դրված լինել որպէս նոր ընկերութեան հիմնական դրամագլուխ:

Հարկաւոր է վերջապէս մտածել հիմնել մի բարեգործական ընկերութիւն, որ իրաւունք ունենայ օգնել թշուառ հայերին երկրագնտիս որ ծայրին և գտնվէին հայերը: Եթէ ոչ մենք բոլոր ժամանակ անհոգ ենք մնում և վերջը, երբ մի որ և է դժբաղդութիւն է

## ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ

### (ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

—

### XV.

Սալիմեանց աւարտեց իր ուսումը, վերջացրեց իր հարցաքննութիւնները: Այժմ նա մեզ պէս էլ ուսանող չէր, նա իրաւաբանութեան կանդիդատ էր, նա թողնում էր ուսանողական կեանքը, համալսարանը, և մի քանի օրից յետոյ գուցէ պէտք է մտնէր հասարակական կեանքը:

Մի երեկոյ, հէնց որ ազատվեցայ, օրական պարապմունքներիցս, վճռեցի գնալ նրա մօտ տեսութիւն, որ շնորհաւորեմ նրան: Մարութեանցի թաղման տխուր հանդիսից յետոյ, ես Սալիմեանցին չէի տեսել:

Մի քսան րոպէից յետոյ ես արդէն Տվերսկայա փողոցի վրա էի, իսկ կէս ժամից յետոյ ես բախում էի Սալիմեանցի սենեակի դուռը:

—Входите, լսվեց սենեակից ինձ լաւ ծանօթ ձայնը: Սալիմեանց տանն էր:

Բայց նա մենակ չէր: Հասարակ բայց մաքուր կերպով զարդարված սենեակի անկիւնում դրած մի լայն, կանաչ գոյնի դիվանի վրա կիսապառկած նստած էր մի կին: Դա Նատաշա էր, Սալիմեանցի սիրուհին, որին ես թէև առիթ չունէի յաճախ տեսնելու, բայց որին ես ճանաչում էի, ինչպէս ճանաչում էի ընկերներիս բոլոր սիրուհիններին:

—Շնորհաւորում եմ քեզ, ասացի ես մտնելով սենեակը և ձեռք մեկնելով Սալիմեանցին:

—Շնորհակալ եմ, պատասխանեց նա, իր սովորական մի տեսակ պաշտօնական ժպիտը երեսին և պինդ սեղմելով ձեռքս: Ես հէնց այս րոպէիս ուզումէի քեզ մօտ անցնել, հրաժարական առնեմ քեզանից, բայց դու ինքդ եկար. շատ ուրախ եմ: Վաղը ես արդէն ճանապարհ եմ ընկնում դէպի Թիֆլիս:

—Միթէ, այդպէս շուտ....Ցանկանում եմ քեզ բարի ճանապարհ և ամեն տեսակ աջողութիւններ կեանքիդ մէջ, ասեցի ես:

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, կրկնեց մի քանի անգամ Սալիմեանց, արուեստական ուրախութեամբ, քեզ էլ ցանկանում եմ շուտով աւարտես ուսումդ, աւելացրեց նա:

Այժմ ես նայեցի դիվանի վրա: Սենեակը մտնելուց յետոյ ես դեռ չէի բարևել Նատաշային: Նա նստած էր դեռ նոյն անշարժ դրութեան մէջ և կարծես բոլորովին ուշադրութիւն չէր էլ դարձնում մեզ վրա: Ինչպէս ասացի դիվանի վրա կիսապառկած, գլուխը բարձերի վերա դրած, նա կարծես մտածմունքների մէջն էր, ծածկելով իր աչքերը իր գեղեցիկ, ձիւնի պէս սպիտակ փոքրիկ ձեռքով, որի բարակ մատները զարդարված էին մի քանի մատանիներով:

Նատաշային առաջին անգամ տեսնողը երբ իմանում էր թէ դա հասարակ կար անող աղջիկ է տարակուսանքի մէջ էր ընկնում: Վերին աստիճանի կանոնաւոր և գեղեցիկ, բուն արիստոկրատական երեսի նուրբ գծագրութիւններ, բարձր հասակ, շնորհալի կազմուածք, փոքրիկ ձեռներ և ոտներ, այդ բոլորը, ասում եմ, Նատաշային առաջին անգամ տեսնողին, ակամայ տարակուսանքի մէջ էր գցում և նա ինքն իրան անպատճառ այդ անհամեստ բայց շատ բնական հարց էր առաջարկում «Երանի իմանայի, ով կարող էր լինել այդ աղջկայ հայրը, կամ մայրը....» Այո՛ այդ կինը չէր կարող լինել հասարակ ծագումից, նրա երակների մէջ կար անպատճառ արիստոկրատական արիւն:

—Բարև ձեզ Նատալիա Նիկոլաեվնա, ասացի ես մօտենալով Նատաշային:

Նա յանկարծ հեռացրեց իր ձեռքը իր աչքերից, և այնքան շնորհով ու չարժմունքով վերկացաւ դիվանից ինձ բարևելու համար, այնքան շնորհալի կերպով մեկնեց ինձ իր ձեռքը,—որ անկողմնապահ տեսնողը, եթէ այդ րոպէին պատահէր այդտեղ, կը կարծէր թէ սա սալօններում մեծացած և կրթված, բարձր հասարակութեանը պատկանող մի տիկին է, որ ընդունում է իր հիւրին իր բնակարանի մէջ:

Բայց ի հարկէ բաւական էր որ խեղճ աղջիկը բերանը բաց անէր և խօսէր, որ նրա հետ խօսակիցը համոզվէր թէ Նատաշան չը նայելով արտաքին տեսքի և ձևերի արիստոկրատական նրբութեանը, իր կրթութեամբ և զարգացմամբ մի շատ հասարակ, բոլորովին անգրագէտ կար անող աղջիկ էր:

Երբ նա հեռացրեց իր գեղեցիկ ձեռքը իր կապոյտ, յափշտակիչ աչքերից, ես նկատեցի թէ նրա աչքերը կարմրած էին: Երեւում էր որ նա իմ գալուց առաջ լաց է եղել, և այդ սենեակում երևի մի ընտանեկան սցէնա է պատահել....

—Այդ շատ լաւ է ձեր կողմից, Նատալիա Նիկոլաեվնա, սկսեցի ես, որ այդքան սիրում էք ձեր բարեկամին և լաց էք լինում երբ հրաժարական էք առնում նրանից: Նշանակում է թէ բարի սիրտ ունէք:

—Բայց շատ անգամ կնոջ լաց լինելը ոչ թէ բարի սիրտ է ցոյց տալիս, բայց յիմարութիւն, պատասխանեց Նատաշան, կրկին նստելով, և այս անգամ շատ համեստ և գրեթէ պաշտօնական դիրք ընդունելով դիվանի վրա:

—Ես ձեր խօսքերը լաւ չեմ հասկանում:

—Որովհետև տղամարդիկ չարժեն որ նրանց համար լաց լինենք:

—Բայց ոչ թէ ամենքը, կան և արժանաւորները:

—Բոլորդ էլ միմեանց նման էք....

Սալիմեանց ման էր գալիս մեծ քայլերով սենեակի մէջ: Երեւում էր որ այդ խօսակցութիւնը նրան անախորժ էր:

—Ասացէք, դուք ինչ կանէք ձեր սիրուհու հետ, երբ աւարտած կը լինէք ձեր ուսումը, յանկարծ դիմեց ինձ Նատաշան, ուղիղ իմ աչքերին նայելով, կարծես թէ ուզում էր հետազօտել, թափանցել իմ սիրտը, իմ զգացմունքները:

—Ես սիրուհի չունեմ:

—Սուտ էք ասում:

—Ես երբէք սուտ չեմ խօսում:

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 23 դեկտ. 77

Հայերի զինուորագրութեան հարցը անորոշ մնացած է: Կառավարութիւնը տեսնելով Կ. Պօլսեցի հայերի դիմադրութիւնը, կը զգուշանայ խստութիւն անելէ:

Ներսէս պատրիարք հրաժարական տուաւ: Դեկտեմբերի 20-ին Ազգային ժողովը հաւաքուեցաւ և պատրիարքին հրաժարականի խնդիրը մի ամիս յետաձգեց:

Յոյներն ալ հայերի օրինակէն քաջալերուած, կը մերժեն զինուոր տալ: Ֆանարի, Արնաուտ և Լանկայի եկեղեցիներին մէջ մեծ խռովութիւններ եղան: Դեկտ. 18/30-ին Պերայի Ս. Աստուածածին եկեղեցին 5000-ի չափ ժողովուրդ լեցուած, միաձայն կը պօռային թէ պատրիարքը չենք ուզեր, մատնիչ է, վար առնուի.... կառավարութիւնը խկոյն 200 զօրք ուղարկեց որոնք զէնքի սպառնալիքով հազիւ յաջողեցան դադրեցունել ամբոխին ձայնը:

Մեր խառն ժողով և եկեղեցական համագումար մեծ խոհեմութիւն արած եղան այժմեան դրութեան մէջ զինուորագրութիւնը մերժելով. թէ ոչ մեր եկեղեցիների մէջ ալ այդպիսի, և թերևս ալ աւելի մեծ խռովութիւններ պիտի ըլլէին և գուցէ արիւնհեղութիւն անգամ պատահէր: Կ. Պօլիս հրատարակուող ֆրանսերէն Stamboul լրագիրն որ խմբագրապետն է Լաֆան Հանլի անգլիացին, փոխանակ գովելու մեր եկեղեցականների այս խոհեմութիւն, սաստիկ կը յարձակի նոցա վրայ, իւրեանց որոշում Սուլթանին դէմ ապստամբութիւն անուանելով և հայ ազգին մկրտելով վատ, ապերախտ, երկչոտ և այլն անուններով: Stamboul-ին պատասխանեցին ամեն հայ լրագիրներն ալ որի մէջ նշանաւոր էր «Մանզումէի Էֆքեար»-ի պատասխանը: «Stamboul» բոլորովին կատաղած, «Մանզումէի» դէմ մի խիստ յօդուած գրեց որի մէջ մեր եկեղեցականների դէմ բարբանջելէ յետոյ կաւելցնէ սա խօսքերը որք մեծ ուշադրութեան արժանի են:

«Հայ լրագիրներէն չատեր զմեզ կամբաստանեն թէ չարախօսած ենք իւրեանց ազգի վրա: Ի՞նչ ազգ...: Մի՞թէ հայերը այլ ևս օսմանցի եղած չեն: Այդ հարկաւոր էր որ պահանջէին այն օր որ օսմանեան սահմանադրութիւնը հրատարակուեցաւ զոր այնու ամենայնիւ մեծ ուրախութիւնով յափշտակուած ընդունեցին, նոյն իսկ հայ լրագիրներին այն ժամանակ գործածած լեզուին նայելով:»

Դեկտ. 16, ուրբաթ օր, Սուլթան սէլամլիկի արարողութիւնը կատարելով մզկիթ գնացած ժամանակ, քրիստոնեայ քաղաքապահ զօրքերէն ընտրուած հինգ երիտասարդ պաշտօնականներն ալ իւր հետ էին: Ստոյգ աղբիւրէ կիմանանք որ այդ պաշտօնականներ սուլթանին թիկնապահ (aide-de-camp) չեն, որպէս հրատարակուեցաւ տեղական լրագիրներին մէջ, այլ պաշ չավուշ (sergent-majeur) են որ մի բարձր պաշտօն չէ:

Այդ քրիստոնեայ պաշտօնականներ Եըլտըզ քէօշկի պալատը տարուեցան ուր սուլթանը իւր առաջին քարտուղար Սայիդ փաշային պատուիրեց որ հետևեալ խօսքերը խօսի նոցա:

«Երջանիկ եմ որ կարող եմ հաստատել այժմ թէ իմ կայսերութեան հպատակ ոչ—մահմետական հասարակութիւնները, որք մինչև այժմ չէին կարողացած մասնակցել զինուորական արհեստին, արտօնութիւն չունելով, այսօր միացած կը լինին այն մի և նոյն իրաւունքների և արտօնութիւնների մէջ որք աւելի կը հաստատեն սահմանադրական սկզբունքները զորս ես շնորհեցի իմ ամեն հպատակների, ոչ ազգի և ոչ կրօնի խտրութիւն դնելով: Թէև սահմանադրութիւնը կատարելապէս որոշած է զինուորական և քաղաքային իրաւունքների հաւասարութիւնը, բայց այժմեան պատահարներին պատճառով, իմ ոչ-մահմետական հպատակներ զօրաբանակին մէջ ընդունելի հարցը այսօր միայն սկսած է գործադրուիլ: Իմ պաշտօնէայների յանձնարարած եմ որ հարկաւոր եղած ամեն խնամ տանին որպէս զի կարելի լինի այդ վերանորոգութիւն (րէֆօրմ) մի րոպէ յառաջ գործադրուիլ: Կը սիրեմ յուսալ որ իմ ոչ-մահմետական հպատակներ այնչափ գոհ կը լինին որչափ ես, տեսնելով թէ օրէնքի այդ պակասն ալ լցուած է:»

Սուլթանի այս խօսքերին նայելով զինուորագրութիւնը մի շնորհ է որ կը լինի քրիստոնեայներին. մի՞թէ շնորհը բռնի և ստիպելով կը տրուի: Ո՞ր տեղ է քրիստոնեայների երևակայական ազատութիւն զոր սուլթանը կը յայտարարէ: Քրիստոնեայն թէ կենդանի է, իր վկայութիւն չընդունուի, թէ մեռնի, վագըֆը կը յափշտակէ իր կալուածներ և հարստութիւն: Մի՞թէ հաւասարութիւն է այս:

* * *

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԱԶԱՐՋԻԿ. յունվարի 27-ին: Պաշտօնապէս հաղորդում են, որ գեներալ ադիւտանտ Մանզէյ իր հետ ունենալով Կինբուրգի դրագուններին, Բելօրուսի գուսարներին, 18 որ կազակների գունդը և ձիաւոր թնդանօթներ յունվարի 22-ին վերցրեց Կազլուջա և Պրավօդի: Բնակիչները մեր զօրքերին աղ ու հացով ընդունեցին, բերին Պրավօդ քաղաքի բանալիները: Պրավօդում ու Վենչատինում երկաթուղու չորս կամուրջները քանդված են: Հեռագրաթելը, բոլոր կայարանները և երկաթուղու գծերը չորս տեղ ոչնչացրած են: Թշնամին փախաւ: Գերի ենք արել 40 մարդ հետևակ կանոնաւոր զօրքերից և մի քանի ձիաւորներ: Պրավօդում գտնված արքունական պահեստները այրված են: Գիշերը 22—23 յունվարի ստացվեց Նորին Բարձրութեան Գլխաւոր Հրամանատարի հեռագիրը զինադադարման մասին: Իսկոյն այդ լուրը հասցրած է գեներալ Մանզէյին: Ստանալով այդ լուրը ճանապարհին, նա եկաւ Բալաջի, որ Բազարջիկից 15 վերստ հեռու է:

ԱԴՐԻԱՆՕՊՕԼ. յունվարի 27-ին: Պաշտօնապէս հաղորդում են, որ զինադադարման պայմաններին համեմատ Բարձր Դուռը պէտք է վերջացնի նաւահանգիստների պաշարումն և այն ժամանակ կըսկսվի առևտրի ազատութիւնը, որի մասին կը յայտնվի: Բացի այս նա պէտք է մաքրէ Սուլինա, Րուշչուկ, Սիլիստրիա և Վիդդին ամրոցները: Մենք էլ մեր կողմից, պէտք է Դունայ գետի արգելքները հեռացնենք, որ նաւերը ազատ լողան: Ռուսաց զօրքերի ձեռքին կը մնան հետևեալ ծովային սահմանները, մեր սահմանից մինչև Բալչիկ, Ռուսաց զօրքերի ձեռքին այդտեղ կը լինեն Բուրգօս և Մեդիա նաւահանգիստներ: Մարմարեան ծովի վրա՝ Բիւմ-Չեկմէնջեց մինչև Տօրկ: Արխիպելագի վրա՝ Ուրլեց մինչև Մօկրի: Երկաթուղիները Թիւրքերի առևտրի համար ազատ են: Նաւահանգիստներում կարելի է ամեն բան բերել, բացի պատերազմական պաշարներից:

ԱԹԷՆՔ. յունվարի 26-ին: Պաշտօնապէս հաղորդում են, որ Թէպէտ պետութիւնների ներկայացուցիչները պահանջեցին, որ յունաց զօրքերին հրաման տրվի չը շարունակել առաջ գնալը, այնուամենայնիւ պատերազմական պատրաստութիւնները և զօրքերի տեղափոխվելը շարունակվում է:

ՎԻԷՆՆԱ. յունվարի 26-ին: Presse լրագրին հեռագրում են Աթէնքից, որ Բ. Դ. խնդրեց պետութիւններին միջամտել, որ Յունաստանը իր զօրքերը յետ կանչէ: Նա խոստանում է ինքը պաշտպանել Թիւրքաց յունական նահանգների շահերը:

ԼՕՆԴՕՆ. յունվարի 26 ին: «Daily News» լրագրի թղթակիցը Ադրիանօպօլում տեսնվեց Սերվէր-փաշայի հետ: Սա յայտնեց, որ Թիւրքիան խաբված է Անգլիայի խոստմունքով օգնութիւն հասցնել: Անգլիան դրդում էր շարունակել պատերազմը: Սերվէր-փաշան գանգատվում էր որ Բիկօնսֆիլդ և Լէյարդ սատիկ հաւատացնում էին, որ կօգնեն: Այս հանգամանքների համար հաստատութիւններ կան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. յունվարի 27-ին: Agence Général հաղորդում է, որ Թիւրքաց այն անգթութիւնները, որ Յունաստանը իր զօրքերի Էպիրոս և Թեսալիա մտնելու պատճառ է բերում, հնարված չեն: Ճշմարիտ չերկեզները սպանում էին և կենդանի մարդիկ էին թաղում: Տեսնելով, որ Թիւրքաց նաւատորմը մօտենում է Պիրէին ամբակոծելու նպատակով, յունաց կառավարութիւնը դադարեցրեց զօրքերի շարժողութիւնը և խնդրեց պետութիւններից պաշտպանել յոյն բնակիչներին անգթութիւններից: Agence Général կարծում է, որ խնդիրքը 'ի գլուխ չի անցնի: Մինչև այժմ չէ հաստատվել Polit. Correspondenz լրագրի հաղորդած լուրը Անգլիական նաւատորմի և Ֆրանսիականի մի մասի Կ. Պօլսի ջրերի մէջ մտնելու վրա: Այդ բոլորովին անպատեհութիւն չէր լինի Ռուսաստանի համար, որ դեռ անցեալ տարի առաջարկում էր այդպէս անել: Չէ կարելի հաւատալ այն լուրին, որ իբր թէ Սերբիան չէ ընդունում զինադադարումն: Անհաւատալի է նոյնպէս այն լուրը, որ իբր թէ Աւստրիական կառավարութիւնը ընդդիմանում է ռուսաց զօրքերի այն ամրոցները մտնելուն, որոնց Թիւրքերը թողել են: Այդ լուրերը երևի Թիւրքաց աղբիւրներից են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. յունվարի 27-ին: „Правитель. Вѣстн.“ լրագրում տպած են խաղաղութեան սկզբնական պայմանները, որոնց Մեծ Իշխան Գլխաւոր Հրամանատարը յանձնեց Թիւրքաց հաւատարմատարներին: Եթէ որ Թիւրքերը զինադադարումն խնդրէին զօրքերի առաջապահ դիրքերում, Նորին Բարձրութեան գլխաւոր հրամանատարը պէտքէ յայտնէր, որ թշնամական գործողութիւնները չեն վերջանայ, մինչև Բ. Դուռը սկզբից չընդունէ պայմանների հետևեալ հիմունքները. 1) Բօլգարիան, որի սահմանները պէտք է որոշվին բնակիչների մեծամասն տեղերով, որոնք (այդ տեղերը) ոչ մի կերպ պակաս չը պէտք է լինեն քան թէ որոշված է Կ. Պօլսի կօնֆերենցիայում, պէտք է դառնայ ինքնավարութիւն վայելող իշխանութիւն տեղական քրիստոնեայ կառավարութեամբ և տեղական միլիցիայով: Բօլգարական իշխանութիւնը յայտնի հարկ կը վճարէ: Թիւրքաց զօրքերը այնտեղ չը պէտքէ լինեն, բացի մի քանի տե-

---

ծաղում էին, վիճաբանում էին: Մի քանիս, վերջապէս, կանաչ սեղանի առջև նստած թուղթ էին խաղում:

Ես մօտեցայ մի խմբին, որ մեծ մասամբ հայ ուսանողներից էր բաղկացած:

—Դուք ինձ չէք ճանաչում, դիմեց ինձ խմբի մէջ նստած մի կին, որ մի ձեռքում պապիրօս ունէր բռնած, միւս ձեռքում թէյի բաժակ:

—Այդ դուք էք Նատաշա, ես ձեզ ճշմարիտ չը ճանաչեցի, բացականչեցի ես:

—Ուրեմն ես հարուստ կը լինեմ, ասեց նա և սաստիկ ծիծաղեց:

Ինձ թվաց թէ նա քիչ խմած էր:

Նատաշային դժուար էր ճանաչել: Ես նրան կարողացայ ճանաչել միայն ձայնի հնչիւնից: Նա չաղացել էր, տգեղացել էր և մաշվել էր:

Ինձ ասացին թէ Սալիմեանցից յետոյ, որ նրա առաջին սիրեկան և սիրոյ առաջին առարկայ էր, այժմ ութ թէ ինն ամսվայ մէջ նա արդէն երկու թէ երեք սիրեկան էր փոխել:

—Նատալիա Նիկօլաևնա, խնդրեմ մի երգ երգեցէք, անդադար աղաչում էր Նատաշային մի չատ երիտասարդ ուսանող, որի դէմքից ես եզրակացրի թէ հայ պէտք է լինի:

—Հայերէն երգեցէք, կանչեցին միւսները:

Նատաշան թէև փքր ինչ յօգնած, բայց բաւական դուր եկան ձայնով սկսեց երգել «Ծիծեռնակ» երգը: Ես առաջին անգամ էի լսում նրա երգելը առհասարակ, թէև գիտէի որ նա երգում է, լսած էի նոյնպէս որ նա հայերէն երգերն էլ գիտէ: Սալիմեանցի հետ չորս տարի ապրելով և անդադար հայ ուսանողների շրջանում պտտելով, Նատաշան սովորեց մի քանի հայերէն երգեր և մինչև անգամ սկսեց քիչ թէ չատ հասկանալ հայոց խօսակցութիւնը: Բայց զարմանալի տպաւորութիւն էր անում նրա երգելու մէջ հայոց բառերի բուն ռուսական արտասանութիւնը:

—Այդ ով է սովորեցրել ձեզ հայոց երգերը, շարունակում էր ձանձրացնել Նատաշային երիտասարդ ուսանողը:

—Ուսանողներից սովորեցի:

—Կարծեմ Սալիմեանցն է սովորեցրել ձեզ, աւելացրեց երիտասարդը:

Սալիմեանցի անունը լսելով աղջիկը գցեց երիտասարդի վրա սարսափելի կատաղած հայեացք, սաստիկ կարմրեց և իսկոյն գունաթափվեց: Արտասունքի երկու խոշոր կաթիլներ վազեցին նրա թշերի վրա: Նա իր երկու ձեռներով ծածկեց իր երեսը, շտապով վերկացաւ տեղից և դուրս վազեց միւս սենեակը:

Մի՞թէ մինչև այժմ նա նրան սիրում էր: Կամ նրա ազգանունը արտասանած ժամանակ նա յիշեց գուցէ իր կորած երեխաներին....

XVII

Աշունքի տաք և գեղեցիկ եղանակ էր, երբ ես երկու տարուց յետոյ վերադարձայ Թիֆլիս:

Իմ գալուց յետոյ միւս օրը, պատահելով իմ հին ծանօթ և դասընկեր Բ....ին, ես արդէն բուն Թիֆլիսցու պէս անգործ և անհոգ թափառում էի նրա հետ քաղաքի փողոցներում:

Բուլվարը, տրօտուարները, Ալէքսանդրեան այգին լի էին զբօսնող հասարակութեամբ:

Միրիմանովի տան խանութների առջև կանգնեց մի գեղեցիկ մասնաւոր կառք:

Մի երիտասարդ գեղեցիկ հագնված, ածիլված երեսով, ցիլինդր գլխին՝ դուրս եկաւ կառքից և կանգնելով տրօտուարի վրա, ձեռք մեկնեց կառքի մէջ նստած չափից դուրս զարդարված նորահաս կնոջը, որ օգնէ նրան կառքից դուրս գալու:

Ո՞վ է սա, հարցրի ես Բ....ին: Ինչ որ ծանօթ երես է, բայց չեմ կարող յիշել ով է:

—Մի՞թէ չես ճանաչում, Սալիմեանցն է, մեր դասընկերը:

—Ի՞նչ ես ասում, որքան փոխվել է ...Ափսոս որ չը տեսաւ ինձ. մենք լաւ բարեկամներ ենք եղել: Նա ծառայութեան մէջն է:

—Ոչ ադվօկատութիւն է անում: Լաւ փողեր է աշխատում, գիտես:

—Իսկ այն աղջիկը ով է:

—Դա նրա կինն է: Երկու շաբաթ չը կայ որ պսակվել է: Հարուստ աղջիկ է վեր առել վաթսուն հազար րուբլ բաժինք: Նա լաւ տանից է, յայտնի հարուստ Ա....ի աղջիկն է:

—Բայց Սալիմեանց ինքն էլ փող ունէր:

—Ի՞նչ անենք որ ունէր. փողը մի՞թէ կարող է վնասել: Ասում են որ եկեղեցի չէր գնում մինչև որ աները ինքն չեկաւ նրա տունը և նաղդ չը համրեց աղջկայ բաժինքը:

—Իսկ Մօսկվայում նրա խեղճ Նատաշան ինչ թշուառ դրութեան մէջն է, ասացի ես:

—Այո, լսեցի, նա կարծեմ այժմ բոլորովին ընկել է....

—Ես նրան մի անգամ տեսայ: Նա դեռ սիրում է Սալիմեանցին և չէ կարող մոռանալ իր երեխաներին:

—Այո.... սարսափելի բան է, ինքն իրան խօսում էր Բ....: Գցել թշուառութեան մէջ իր սիրուհուն, իր երեխաների մօրը, շպրտել իր երեխաներին շան լակոտների պէս,—և վերադառնալ հայրենիք, պսակվել լաւ տանից մի աղջիկ հարուստ բաժինքով վեր առնել, մարդ դառնալ, ամենքից պատուած և յարգված լինել, հասարակութեան մէջ դեր խաղալ, բարոյականութեան և խեղճութեան պաշտպան անգամ հանդիսանալ....

—Դու տէրտէր չե՞ս դառնում, բարեկամ.... լաւ քարոզներ կը կարդաս: Խորհուրդ եմ տալիս պատրաստվես:

—Լսիր, կանգնեցրեց ինձ Բ.... երբ հասնելով իմ բնակարանին, ես պատրաստվում էի ասել նրան՝ «ցը տեսութիւն», և տան դուռը բաց անել, լսիր, մի բան եմ առաջարկում քեզ: Դու խօ գրում ես ժամանակ առ ժամանակ հայոց լրագիրներում:

—Գրում եմ, այո:

—Ուրեմն գրիր խնդրեմ մեր խօսած նիւթի վրա վիպասանութեան պէս մի բան, որի մէջ հերոսներից մինը կը լինի մեր բարեկամ Սալիմեանց, իսկ միւսը խեղճ Մարուքեանց: Հաւատացնում եմ քեզ լաւ դուրս կը գայ....

—Կը փորձեմ, բայց չեմ կարծում որ աջողվի, ասացի ես արդէն բաց անելով բնակարանիս դուռը:

—Սպասիր, էլի մի խօսք, կանչեց Բ.... իմ ետևից, վիպասանութեանդ վերնագիրն էլ գլխումս պատրաստ է....գիտես ինչպէս...«Այնտեղ և Այստեղ:»

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

